

ԿՈՄԻՏԱՍԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ

Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

(ՀՄՄՀ ԳԱ թղթակից-անդամ)

Կոմիտասը ժողովրդական երգերը գնահատել է իբրև ժողովրդի հույզերի ու մտորումների հարազատ թարգմանն հանդիսացող բարձրարվեստ ստեղծագործություններ, որոնց մեջ, իր բառերով ասած՝ դրոշմված է «գեղջուկ կյանքի լրիվ պատկերը՝ շինականի նուրբ ու սուրբ, խոր ու լայն, պարզ ու վեհ, ազատ ու արձակ ստեղծագործ ուժը...», նրա «կյանքի մոլորն ու լույսը, գործն ու հույսը»¹:

Ելնելով հայ ժողովրդական երգերի բնույթից և բանաստեղծական խոսքի բովանդակությունից, երաժշտագետը դրանք բաժանել է վեց հիմնական տեսակների.

1. *Մանկական երգեր*, որոնք ամենապարզ կազմն ունեն:

2. *Պարերգեր*, որոնք կոչվում են յաղի և մի քիչ ավելի զաբգացած են, քան առաջինները: Դրանք ծագում են առնում պարի ժամանակ տղայի և աղջկա միջև առաջացած զգացմունքներից:

3. *Դյուցազներգեր*, որոնք նվիրված են լինում որևէ հերոսի գովքին և գլխավորապես հիմնվում են պատմական ավանդությունների վրա:

4. *Մահերգեր*: Այս բաժնի մեջ մտնում են մեռելները սգալու եղանակները: Մահերգերը սկսվում են ափսոսանքներով, ավաղներով, որ հետո կրկնակ հանգերգ են դառնում, կամ կենսագրական նկարագրություններով, որոնց կցվում են բնության տխուր տեսարանների պատկերները:

5. *Հարսանեկան երգեր*, որոնք երգվում են հարսանեկան զանազան արարողությունների ժամանակ, պսակից առաջ: Հետաքրքիր են այս շարքում այն երգերը, որոնք կրում են *ծաղկոց* անունը:

6. *Աշխատանքի երգեր*, որոնք ամենագումագեղներն ու հետաքրքիրներն են: Օրինակ, գութանի, վար ու ցանքի, սայլի, չութի, կալի, հունձքի, քաղհանի երգերը իրենց նյութն ստանում են շինականի աշխատանքի այլևայլ հանգամանքներից²:

Հակառակ մեզանում ընդունված և ավանդույթի ուժով տակավին շարունակվող այն մոտեցման, որի համաձայն ժողովրդական երգի բանաստեղծական խոսքն ու երաժշտական եղանակը քննարկվում ու գնահատվում են իրարից մեքենայորեն բաժանված, Կոմիտասը դրանք դիտել է իրենց ներքին կապի մեջ, իբրև ստեղծագործական ամբողջի մի միասնություն:

Ժողովրդական երգերի ժանրային բնույթի որոշարկման գործում երաժշտագետը հավասարապես կարևոր է համարել թե՛ բառերը և թե՛ մեղեդին: Նրա հայացքով,

¹ Կ ո մ ի տ ա ս, *Հոգվածներ և ուռածնասիրություններ*, Երևան, 1941, էջ 84, 99:

² Նույն տեղում, էջ 11—13:

Եթե երգի երաժշտությունը կամ մեղեդին բացահայտում է երգի քնարական էությունը, Բրազզայական բովանդակությունը, ապա բառերը կամ բանաստեղծական խոսքը գեղազանցապես արտահայտում են միտք, պատմում այս կամ այն դեպքի մասին, վերարտադրում իրադրությունը, միջավայրը, դրսևորում որոշակի ներքին վիճակ:

Իր երաժշտագիտական ուսումնասիրություններում Կոմիտասը բազմիցս անդրադարձել է ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի և մեղեդու ներդաշնակության փաստին: «Ունե երաժշտություն,— գրել է նա,— ներկայանում է մեզ առհասարակ երկու նկարագրով: Կա երաժշտություն, որ բնագրի խոսքերի հետ ներքին կապ ունի. դա պարզապես մելոդիա է, մի որոշ եղանակ՝ հարմարեցրած բառերին: Կարելի է այդ եղանակին ուրիշ բնագիր տալ կամ բնագրին ուրիշ եղանակ դնել, առանց անպատեհության: Այդ տեսակ երաժշտության օրինակներ շատ կան թե՛ մեզանում և թե՛ օտարների մոտ:

Բայց կա և այնպիսի երաժշտություն, ուր բնագիրն ու եղանակները բացարձակապես իրար են զուգորդված: Անկարելի է մինը բաժանել մյուսից, որովհետև librettiste-ի և compositeur-ի ստեղծագործ մտածումի մեջ կատարյալ նույնություն և միություն կա: Այդպես են, օրինակ, մեր ժողովրդական երգերը, որի թե՛ խոսքերը և թե՛ եղանակը միաժամանակ ստեղծել է ինքը ժողովուրդը³:

Մի ուրիշ անգամ, անդրադառնալով հայ երաժշտության երկու առանձին տեսակների, Կոմիտասը վերստին ժողովրդական երգերի բնորոշ հատկանիշներից մեկը համարել է այդ երգերի մեղեդու և բանաստեղծության միևնույն հեղինակի ստեղծագործություն լինելու հանգամանքը:

«Մեր երաժշտությունը,— նրա համոզմամբ,— երկու գլխավոր խմբի է բաժանվում.

1. Եկեղեցական

2. Աշխարհական կամ ավելի ուղիղն ասած՝ ժողովրդական:

Այս երկու խմբի եղանակներին հատկանշականն այն է, որ և՛ ձայնը, և՛ խոսքը, կամ ուրիշ բառերով՝ և՛ երաժշտությունը և՛ բանաստեղծությունը միաժամանակ և միևնույն անձի ստեղծագործության կնիքն են կրում⁴:

Նույն միտքը տարբեր երանգներով Կոմիտասը արտահայտել է նաև հայ ժողովրդական երգերի առանձին տեսակներին անդրադառնալիս: Խոսելով, օրինակ, մեր գեղջուկ պարերգերի մասին, նա ընդգծել է բառերի կարևոր դերը եղանակների ստեղծման ու պահպանման գործում: Նրա կարծիքով՝ պարերգերը իրենց բովանդակությամբ համաձայն ունենում են և համապատասխան երաժշտական արտահայտություն: «... Երբ պոկ է գալի մի եղանակ իր բուն և հիմնական բառերից, կորցնում է հավասարակշռող նեցուկը, կանգուն պահող հենարանը և անհայտանում⁵:

Կոմիտասի հավաստմամբ՝ «ժողովուրդը երգում է այնպես, ինչպես խորհում է և խոսում: Երգը և խոսքը միատեսակ կարողություն են. որքան լավ խորհի մարդը, այնքան լավ կխոսի և կերգի⁶: Եվ ապա. «Խոսքն ու ձայնը, բանաստեղծությունն ու երաժշտությունը, իբր նրկվորյակ քույրեր, բխում են անսպառ կերպով ժողովրդի մտքից ու սրտից, բնագոյաբար և ստանց կանխակալ նախապատրաստություն ունենալու⁷: Ժողովրդական երգերի մեղեդու և խոսքի կապի ու միասնության վերաբերյալ

3 «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», Երևան, 1960, էջ 162:

4 Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 10:

5 Նույն տեղում, էջ 28—29, 52—53:

6 Տե՛ս «Սովետական Հայաստան», № 248, 1969 թ.:

7 Կոմիտաս, Հոգվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 24:

երաժշտագետի արտահայտած վերոհիշյալ մտքերը լինելով նրա երկար տարիների մասնագիտական կենսափորձի և ինքնուրույն դիտարկումների ու ընկալումների արդյունք, համահունչ են այն տեսակետներին, որ այդ առթիվ ժամանակին հայտնել են միջազգային ճանաչում ունեցող նշանավոր գիտնականներ: Խոսքը մարդկային մշակույթի նախնական փուլի համար բնորոշ սինկրետիկ արվեստի տեսության մասին է, որի համաձայն վաղնջական դարերում արվեստի տարբեր տեսակներ, ինչպիսիք են երաժշտությունը, բանաստեղծությունը և պարը, հանդես են եկել չտարբերակված և միաձուլվ ձևով. մի վիճակ, որի վերապրուկները շատ դարեր հետո պահպանվել են: Ժողովրդական երգերի մեջ⁸:

Սկզբունքային ճիշտ դիրքորոշում ունենալով ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի նկատմամբ և իրավացիորեն բարձր գնահատելով նրա արժեքն ու նշանակությունը, Կոմիտասը, ըստ այդմ էլ հատուկ ուշադրություն է դարձրել խոսքին: Համապատասխան փաստերը պերճախոս կերպով բացահայտում են բազմամյա ու բեղմնավոր այն գործունեությունը, որ, իր կյանքի տարբեր տարիներին, ունեցել է նա տվյալ ասպարեզում:

Հիշարժան է, առաջին հերթին, ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի հայտնաբերման և գրառման ուղղությամբ երաժշտագետի կատարած բանահավաքական աշխատանքը, որն անբաժան է նույն երգերի եղանակների կամ մեղեդիների ձայնագրման բնագավառում նրա ունեցած եռանդուն գործունեությունից:

Դեռևս 1891 թ. Կոմիտասը կատարել է ժողովրդական երգերի եղանակների ու բառերի իր առաջին գրառումները: Այդ է վկայում հիշյալ թվականին վերաբերող նրա մի ձեռագիր տետրակը, ուր կան թվով 37 գեղեկական երգեր (աշխատանքային, կենցաղային, սիրային բովանդակությամբ): Դրանց լավագույն մուշտներից են՝ «Գարուն ա», «Երկինքն ամպել է», «Արագը հեշտացել ս» սկզբնատողերով հայտնի երգերը⁹:

Կոմիտասյան գրառումների երկրորդ ժողովածուն դարձյալ վերաբերում է 90-ական թվականներին: Խոսքը բանահավաք Հովսեփ Ծանիկյանի 1895 թ. հրատարակած «Հնությունք Ակնա» գրքի վերջում զետեղված «Ծար Ակնա ժողովրդական երգերի» խորագրով հավելվածի մասին է, ուր կան թվով 25 սիրո, պանդխտության, հարսանեկան և այլ երգեր Արևմտյան Հայաստանի Ակն գավառի բարբառով, որոնցից 22-ը, նույն Ծանիկյանի վկայությամբ, գրի առել ու ձայնագրել է Կոմիտասը 1892 և 1894 թթ.¹⁰: Դրանցից են՝ «Աղվոր էս չունիս խալատ», «Մի՛ լար մարիկ, մի՛ լար», «Ուսկի՛ կուգաս վարի էգուն», «Ան գիշեր Համբարձում է», «Աղջիկ իջիր դուռը բաց» և այլ սկզբնատողերով երգերը¹¹:

Ժողովրդական երգերի հավաքման ուղղությամբ Կոմիտասի կատարած հաջորդ մեծ գործը նրա հայտնի «Ազգագրական ժողովածուն» է, որն ամփոփում է 255 երգ՝ գրի առնված 1890—1904 թթ. ընթացքում Հայաստանի տարբեր վայրերում (Իգդիր,

⁸ Ernst Grosse, Die Anfänge der kunst, Freiburg, 1894; A. H. Веселовский, Три главы из исторической поэтики (Собр. соч. т. I. СПб, 1913, H. Werner, Die Ursprünge der Lyrik, München, 1924.

⁹ Հայկական ձայնանիշներից եվրոպական նոտաների է փոխադրել և համապատասխան ծանոթագրություններով օժտելով հրատարակել է Մ. Աղայանը (տե՛ս Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ. 2, Երևան, 1950):

¹⁰ Հ. Ժանիկյան, Հնությունք Ակնա, Թիֆլիս, 1895, էջ 501—502:

¹¹ Դրանց միջնադարյան և նոր ժամանակների բազմաթիվ տարբերակները տարիներ անց լույս տեսան Մ. Արեղյանի Երևանական ժողովրդական տաղեր (Երևան, 1940) և Ա. Զոպանյանի «Հայրենների բուրաստանը» (Փարիզ, 1940) մեծարժեք ժողովածուների մեջ:

Կողք. Ապարան և այլն)¹²: Վերջինիս մեջ տեղ գտած բազմազան բովանդակությամբ երգերից են՝ «Ծիրանի ծառ. բար մի՛ տա», «Չինար ես, կեռանաղ մի», «Հոլ արա եզ: ջան», «Իմ չինարի յարը», «Չեմ, չեմ», «Կուծն առա», «Հով արեք սարեր ջան» սկզբնատողերով հայտնի երգերը և այլն:

Կոմիտասյան գրառումների հերթական (4-րդ) հավաքածուն կազմում են Արա-րատյան դաշտի հայկական գյուղերում 1913 թ. նրա հայտնաբերած 60 երգերը (պարերգեր, սիրային, կենցաղային երգեր և այլն): Դրանցից առանձնապես ուշագրավ են՝ «Հո՛յ իմ նազանի յարը», «Երևան բաղ եմ արել», «Ալագյազ աչերըդ», «Թագ-վորամեր դուս արի» սկզբնատողերով երգերը և այլն¹³:

Նշված ժողովածուներով չեն սպառվում ժողովրդական երգերի կոմիտասյան գրառումները: Այդ շարքը պետք է լրացվի Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի երաժշտագիտական բաժնի եռանդուն ջանքերով վերջին տասնամյակներին ձեռք բերված մի քանի ձեռագիր ժողովածուներով: Դրանցից առաջինը պարունակում է 238 երգեր (հարսանեկան, կենցաղային, երգիծական, պանդխտության և այլ բնույթի), երկրորդը՝ 368 երգեր (բազմազան բովանդակությամբ), որոնցից 255-ը կազմում են Կոմիտասի հայտնի «Ազգագրական ժողովածուի» բնագիրը, իսկ 113-ը նոր երգեր են, գրի առնված 1904 թ. հետո: Հիշյալ երկու ծավալուն ժողովածուներից բացի, կոմիտասյան նորահայտ ձեռագրերի մեջ կան ժողովրդական երգերի ևս 8 փոքր ժողովածուներ, գրի առնված 1901, 1909 և այլ թվականներին¹⁴:

Սկզբից և եթե անհրաժեշտ է հավաստել, որ ժողովրդական երգերի գրառման գործում Կոմիտասի համար, իբրև երաժշտագետի, առաջնայինը, բնականորեն, եղել է դրանց մեղեդիները գրի առնելու մտահոգությունը: Այդ իսկ պատճառով երգերի ձայնագրման ընդունված կանոնի համաձայն նա հաճախ գրի է առել խոսքի մի մասը միայն: Սակայն, հետևելով բանաստեղծական իր բնատուր հակումին և հիանալի զգալով ու ըմբռնելով ժողովրդական երգերի լավագույն նմուշների խոսքի գեղարվեստական նշանակալից արժանիքը, նա մի շարք դեպքերում գրի է առել դրանց լրիվ բնագրերը: Այդ հանգամանքը մեծապես բարձրացրել է կոմիտասյան գրառումների նշանակությունը նաև բանագիտական առումով: Այդօրինակ գրառումներ են նրա առաջին (1891 թ.) և չորրորդ (1913 թ.) ազգագրական ժողովածուները:

Կոմիտասի գրի առած գեղջկական երգերի մեջ մեծ գտնում ենք բազմաթիվ նմուշներ այդ երգերին հատուկ այնպիսի հիմնական տեսակներից, ինչպիսիք են՝ աշխատանքի, բնության, սիրո, պանդխտության, հարսանեկան, պարի, երգիծական, ուրախության, օրորոցի և սգո երգերը: Տարբերվելով իրարից բովանդակության մոտիվներով և երաժշտական մեղեդիներով, մտքի ու զգացման դրսևորման նրբերանգներով, ժողովրդական այդ երգերի առանձին տեսակները մոտ ու մասն են իրար իրենց վարակիչ անմիջականությամբ, պարզ, անպաճույճ և նուրբ արվեստով, իրենց բիմբում ընկած ընդհանուր աշխարհայեցությամբ, հոգեբանությամբ, ազգային միաս-

¹² Առաջին անգամ լույս է տեսել 1931 թ.: Ժողովածուի մեջ տեղ գտած երգերի եղանակները հայկական ձայնանիշներից եվրոպական նոտաների է փոխադրել Սպ. Մելիքյանը, կցելով համապատասխան ծանոթագրություններ ու առաջարկներ (տե՛ս Կ ո մ ի տ ա ս, Ժողովրդական երգեր, «Ազգագրական ժողովածու», ՀնՍՀ Պետհրատի երաժշտական սեկտոր, 1931):

¹³ Կ ո մ ի տ ա ս, Ազգագրական ժողովածու, հ. 2, «Հայ ժողովրդական երգեր և պարերգեր», կազմող Մ. Ղ. Աղայան, Երևան, 1950:

¹⁴ Հիշատակված նորահայտ ժողովածուների մանրամասն նկարագրությունը կարելի է գտնել Ռ. Աթայանի հաղորդում-հոդվածներում. տե՛ս «Տեղեկագիր» (ՀՍՀ ԳԱ հասարակական գիտությունների), 1953, № 6, էջ 79—88: «Սովետական արվեստ», 1955, № 4, էջ 42—48 և այլն:

նական ոգով ու ոճով: Նրանց մեջ աչքի են ընկնում հայ ժողովրդի աշխարհիկ ոգին և բնության պաշտամունքը:

Ավետիք Իսահակյանի արդարացի հավաստմամբ՝ Կոմիտասն այդ երգերով «լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցատումը բռնության, ստրկության դեմ. նրա խելդոված վիշտը, իրավագուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը»¹⁵:

Հայ ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի կոմիտասյան գրառումները մշակարար պատկերացում են տալիս մեզ այն նկարագրի վերաբերյալ, որ ունեցել են այդ երգերը անցյալ դարի վերջերին և ընթացիկ դարասկզբին: Դրանք հավաստի և անգնահատելի սկզբնաղբյուր են հայ ժողովրդական բանաստեղծության բովանդակության և գեղարվեստական առանձնահատկությունների գիտական հետազոտության համար: Այդ գրառումները մեզ լավ պատկերացում են տալիս մեր գեղջկական երգերի հիմնական տեսակների մասին, բացահայտում են նրանց թեմաները, բնորոշ մոտիվները, լույս են սփռում նրանց բանաստեղծական պատկերների, տաղաչափական ձևերի, հանգավորման եղանակների, մեմբրների ու տարբերակների բերած նորությունների վրա: Հիշյալ գրառումների մեջ զգալի թիվ են կազմում այն ստեղծագործությունները, որոնց բանաստեղծական խոսքերը մեզանում առաջին անգամ արձանագրել է Կոմիտասը: Քիչ չեն դրանց մեջ նաև վաղօրոք հայտնի երգերի նոր, արժեքավոր տարբերակները:

Կոմիտասյան գրառումների շնորհիվ կորստից փրկվել և գիտության սեփականություն են դարձել հայ ժողովրդական բյուրավոր երգերի բանաստեղծական խոսքերը:

Առանձնապես մեծ է Կոմիտասի գրի առած Ակնա երգերի արժեքը, «Հայրեն» անունով հայտնի հայոց հին գուսանական ժողովրդական երգերի հեռավոր արձագանքներն են դրանք, վաղմջական դարերի խորքից բանավոր ավանդությամբ հասած մինչև նոր ժամանակները: Դրանք մեր բուն ազգային բանաստեղծության թանկագին գոհարներն են:

Բանահավաքչական ջանադիր և մանրակրկիտ աշխատանքի կատարյալ մի օրինակ է Լոռու հոչակավոր գութաներգի գրառումը: Հայ բանահյուսության սկզբնաղբյուրների բազմահազար գրառումների մեջ բացառիկ տեղ է գրավում կոմիտասյան այս գրառումը: Նրա մեջ ամենայն հարազատությամբ վերարտադրված են տվյալ երգի բոլոր տողերն ու բառերը, նրանում առկա ամենավերջին ձայնարկությունն անգամ¹⁶:

Գիտության համար մշակակալից արժեք ունեն նաև այն տեղեկությունները, որ հաղորդել է Կոմիտասը իր գրի առած ժողովրդական երգերի հեղինակների ու կատարողների վերաբերյալ: Հայտնի է, որ մեր բանահավաքներն անցյալում ընդհանուր առմամբ անուշադրության են մատնել ժողովրդական բանասացներին: Դրա պատճառը եղել է այն պատկերացումը, որ գոյություն է ունեցել մեզանում (և ոչ միայն մեզանում) ժողովրդական բանահյուսության նկատմամբ, իբրև անհեղինակ և անդեմ մի ստեղծագործության: Անգամ մեր օրերում, երբ հիմնականում վերացված է հիշյալ սխալ պատկերացումը և ավանդական բանահյուսությունը, իրավացիորեն, համարվում է իր հիմքով անհատական և բնույթով միայն հավաքական ստեղծագործություն,

15 Ավետիք Իսահակյան, Երգերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 34:

16 Կոմիտաս, Լոռու ղութաներգը Վարդաբլուր գյուղի ոճով (տե՛ս Շավառաբզ տարեգիրք, Կ. Պոլիս, 1914, էջ 312—336):

դարձյալ միշտ չէ, որ գեղջուկ վիպասանները, գուսանները, ավանդախոսները, առակախոսները, ռեքիաթասացները և մյուսներն արժանանում են պատշաճ ուշադրության:

Այս տեսակետից առանձնապես տուժել են բանահյուսական փոքր ծավալի ստեղծագործությունները (երգ, առած, ասացվածք, հանելուկ և այլն): Կոմիտասի մոտեցումը այլ է եղել: Նա հատուկ ուշադրություն է նվիրել իր գրի առած գեղջկական երգերի հեղինակներին ու կատարողներին, կարևոր կենսագրական տեղեկություններ է քաղել ու հաղորդել նրանց ինքնության, բնավորության, ապրած կենցաղային, աշխատանքային, սոցիալական, բնական-աշխարհագրական միջավայրի, երգաստեղծման մթնոլորտի ու հանգամանքների վերաբերյալ: Այս առումով առանձնապես նշանակալից են այն գրավոր տվյալները, որ թողել է նա մեր գեղջուկ պարերգերի և լոռու գութաներգի հեղինակների ու կատարողների մասին¹⁷:

Արգասավոր է եղել Կոմիտասի կատարած գործը նաև ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի խմբագրման, վերականգնման և վերաստեղծման ուղղությամբ: Մի գործ է դա, որը սերտորեն կապված է այդ երգերի մեղեդիների ներդաշնակման ու մշակման ուղղությամբ նրա իրականացրած ստեղծագործական մեծ աշխատանքի հետ: Բարձր գնահատելով ժողովրդական երգերի բովանդակությունն ու արվեստը, Կոմիտասը լրջորեն զբաղվել է ոչ միայն այդ երգերի սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ ու գրառմամբ, այլև այս կամ այն պատճառով խաթարված դրանց իսկատիպ բանաստեղծական խոսքի վերաստեղծման բանասիրական դժվարին աշխատանքով:

Այդ ուղղությամբ նա սկզբում աշխատակցել է Մանուկ Արեղյանին, պատրաստելով «Հազար ու մի խաղ» խորագրով համատեղ հղացված ժողովրդական հայտնի երգարանը, որի առաջին հիսնյակը լույս տեսավ Վաղարշապատում 1904 թ., իսկ երկրորդը նույն տեղում 1905 թթ.: Ահա թե ինչ է գրել այդ առթիվ Մանուկ Արեղյանը Կոմիտասին նվիրված իր հուշերում. «Ես էլ, Կոմիտասն էլ ունեինք բավական թվով քաղյակներ ժողոված. ձեռք բերինք բազմաթիվ խաղեր նաև մեր ընկերներից և աշակերտներից: Նկատի ունեինք նաև զանազան ժողովածուների մեջ տպագրվածները: Բայց այդ ամենը բավական չհամարելով՝ ամառն իրենց ծնողների մոտ և առհասարակ գյուղերը գնացող աշակերտներին պատվիրեցինք ժողովել ժողովրդական երգեր: Դրա համար Կոմիտասը պատրաստեց հազարավոր թերթիկներ և ամեն մի աշակերտի, առանձնապես իր խմբի երգիչներին բաժանեց, որպեսզի միակերպ թերթիկների վրա գրած բերեն իրենց գրի առած երգերը: Այս միևնույնը կատարեցինք և հաջորդ տարիները, այնպես որ տասնյակ հազարավոր գրած թերթիկներ հավաքվեցին մեզ մոտ: Կոմիտասը դրանց թիվը մոտ քսան հինգ հազար էր հաշվում:

1900 թ. աշնանն արդեն սկսեցինք աշխատել ժողովրդական երգարանի վրա, բայց մի երկու ամիս չանցած՝ տեսանք, որ նախ պետք էր այդ հավաքած նյութերը մշակել, այնպիսի դրության բերել, որ դրանցից օգտվել կարելի լիներ: Թողինք երգարան կազմելը և սկսեցինք բաղդատել մեր ունեցած ժողովրդական երգերը, որպեսզի կարողանանք որոշել անիմաստ ու աղճատված երգերը և օգտվել միայն յմաստալից վարիանտներից»¹⁸:

Թե ինչպես է կատարվել հիշյալ աշխատանքը և ինչպես են կազմվել «Հազար ու մի խաղ» ժողովրդական երգարանի երկու հիսնյակները, այդ մասին հետևյալն է ասված նույն երգարանի առաջին պրակի Կոմիտասի և Արեղյանի գրած ծանոթու-

¹⁷ Կոմիտաս, Հոգիվածներ և ուսումնասիրություններ, Երեւան, 1941, էջ 17—26, 69—74,

¹⁸ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 68:

թյան մեջ: «Ձեռի տակ ունեցած լինելով մոտ 25 հազար քառատողերի ժողովածու, ինչպես և ուրիշ երգերի վարիանտներ, բաղդատել ենք նույն երգերի վարիանտները և վերցրել ենք մեր կարծիքով ընտիր համարված ձևերը... Ժողովուրդը սովորաբար մի տուն միայն երգում է որևէ նղանակով և ապա իրեն ծանոթ քառատողերից. առանց մտքին ուշադրություն դարձնելու, շարունակության մեջ երգում է անխտիր սյւ կամ այն քառատողը: Մենք աշխատել ենք հաջորդ տների ընտրությունն այնպես անել, որ բոլորը միասին, որքան կարելի է մի ամբողջություն կազմեն և հարմար լինեն եղանակին և կրկնակների իմաստին»¹⁹:

«Հազար ու մի խաղի» հիսնյակները Արեղյանի հետ պատրաստելուց հետո, Կոմիտասը հետագայում մեծակ շարունակում է նույն գործը, ձգտելով ամեն կերպ պահպանել «հիմքնություն բնավորություն ունեցող և զուտ ազգային դրոշմ կրող հայ գյուղական եղանակների ոճն ու ոգին»²⁰:

Հիշյալ կարգի խմբագրական վերականգնում-վերաստեղծումների բնորոշ օրինակներից են Կոմիտասի հայտնի.

«Կալի երգը», որը հյուսված է՝ «Հոռո, լո՛, լո՛», «Ա՛րի, ա՛րի քե դուրբան», «Հաշանը դարման արա», «Հոլ արա եզո» և «Հոլել հոլել» սկզբնատողերով հինգ տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», ՆՆ 20, 28, 41, 74).

«Ծիրանի ծառը», որը հյուսված է՝ «Ծիրանի ծառ, բար մի տա», «Հա տվեք, հետ տվեք» և «Հով, հով, հովն ընկավ» սկզբնատողերով երեք տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», ՆՆ 8, 9, 10).

«Բելեր, ցուերը», որը հյուսված է՝ «Բելեր, ցուեր» և «Սարի սովոր» սկզբնատողերով երկու տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», ՆՆ 302, 310, 311).

«Առավոտուն բարի լուսը», որը հյուսված է՝ «Գացի արտեր, բոնի լոր» և «Հազար երնեկ» սկզբնատողերով երկու տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», ՆՆ 44, 112).

«Հով լինին», որը հյուսված է՝ «Հո՛վ, հո՛վ, հո՛վ էղնի» և «Դե՛ թոնք, թոնք» սկզբնատողերով երկու տարբեր երգերի միացումից (տե՛ս «Ազգագրական ժողովածու», ՆՆ 214 Ա., 214 Բ) և այլն:

Ծանոթանալով հիշյալ կարգի երգերի բանաստեղծական խոսքին, մենք այն զգացողությունն ենք ունենում, որ դրանք ի սկզբանե հենց այդպես էլ պետք է ստեղծված լինեին ժողովրդի մեջ՝ իբրև ամբողջական, ավարտուն գործեր: Եվ դա բնական ու հասկանալի է, քանի որ քննության առարկա երգերը խմբագրելիս, վերականգնելիս ու վերաստեղծելիս Կոմիտասը մեծագույն երկյուղածությամբ ու զգուշավորությամբ է մոտենել իր ձևերի տակ եղած ժողովրդական սկզբնաղբյուրներին, թույլ չտալով գրչի և ոչ մի անհարկի շարժում: Բանասիրական և միաժամանակ ստեղծագործական բարդ ու դժվարին այդ աշխատանքը, որը կապված է նուրբ ճաշակի և համապատասխան բանաստեղծական, տաղաչափական, բարբառագիտական ու այլ կարգի իմացությունների հետ, երաժշտագետը իրականացրել է մեծ հաջողությամբ: Նա ամենից առաջ զտել է ժողովրդական երգերը նրանց մեջ տեղ գտած օտարամուտ տարրերից, ազատել դրանք զանազան աղավաղումներից, լրացրել ըստ ուրիշ տարբերակների անաղձատ ու իսկատիպ տվյալների:

¹⁹ «Հազար ու մի խաղ», առաջին հիսնյակ, խմբագրեցին Կոմիտաս վարդապետ և Մանուկ Արեղյան, Վաղարշապատ, 1904, էջ 67—68:

²⁰ «Հայ քնար», հավաքածու գեղջուկ երգերի, Գրի առավ և դաշնակեց Կոմիտաս վարդապետ, Փարիզ, 1907, էջ 3:

Կոմիտասի կատարած հաջորդ կարևոր քայլը եղել է ուշադիր և մանրախույզ աշխատանքով հազարավոր երգերից դրանց լավագույն օրինակների ընտրությունը, վերջիններիս միացումը, ձուլումը ներքնապես մոտ ու հարազատ նյութերին: Պահպանելով ժողովրդական սկզբնաղբյուրների ամբողջականությունը, նա մեկը մյուսի բնական շարունակությունը հանդիսացող առանձին երգերից կազմել է համեմատաբար ընդարձակ նոր ստեղծագործություններ, որոնք ըստ ամենայնի հարազատ լինելով ժողովրդական երգերի էությանը, յուրովի լրացնում, զարգացնում և հարստացնում են այդ երգերի բանաստեղծական խոսքը, աչքի ընկնելով իրենց բովանդակության ու ձևի կատարելությամբ:

Ինչպես տեսանք, Կոմիտասի գործունեությունը չի սահմանափակվել միայն երաժշտության շրջանակներում: Ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքի ուսումնասիրությամբ, այդ խոսքի գրառմամբ, խմբագրմամբ և վերաստեղծմամբ նա նշանակալից ծառայություն է մատուցել նաև հայ բանագիտությանը:

КОМИТАС И ПОЭТИЧЕСКОЕ СЛОВО НАРОДНОЙ ПЕСНИ

А. Т. ГАНАХЯН

Р е з ю м е

Вопреки установившейся в нашей музыковедческой литературе традиции, согласно которой поэтическое слово и мелодия народной песни в основном исследовались раздельно, Комитас рассматривал их как единое целое. По его мнению, если музыка или мелодия вскрывают лирическую сущность песни, ее эмоциональное содержание, то слово или поэтический текст главным образом выражают мысль, повествуют о том или ином событии, воспроизводят ситуацию, среду, выражают определенное настроение.

В своих музыковедческих исследованиях Комитас часто обращался к факту сочетания и единства мелодии и поэтического слова народных песен, считая их характерной чертой то, что и мелодия, и поэтическое слово этих песен принадлежат одному и тому же автору. Вот почему Комитас не довольствовался только записью, исследованием и творческой обработкой музыкальных мелодий народных песен. Он последовательно и серьезно занимался также записью, исследованием, редактированием поэтического текста песен.